Մասնագիտության նկարագիրը	
Պաշտոնի /զբաղմունքի/ անվանումը	Դիմահարդար-կոսմետոլոգ
I. Դերը	Դիմահարդար-կոսմետոլոգը՝ ըստ առկա խնդիրների և անհրաժեշտության իրականացնում է դեմքի, պարանոցի և դեկոլտեի մաշկի խնամք տարբեր կոսմետիկական նյութերի օգնությամբ, իրականացնում է դեմքի մաշկի էսթետիկ նշանակության խնդիրների շտկում, ձեռքերի և ոտքերի մաշկի և եղունգների խնամք, հարդարում, հոնքերի շտկում, ներկում և լամինացիա, թարթիչների սերտաճեցում և լամինացիա, կատարում է տարբեր ոճերի դիմահարդարում, մազածածկույթի էսթետիկ շտկում:
II. Խնդիրների բնագավառները	
<u>Խնդիրների բնագավառ 1. Նախապատրաստական աշխատանքների իրականացում</u>	
Աշխատանքային գործընթացը	Նախապատրաստել դիմահարդար-կոսմետոլոգի աշխատատեղը, ապահովել կոսմետոլոգիական սրահի սանիտարահիգիենիկ պահանջները, նախապատրաստել անհրաժեշտ սարքավորումները, գործիքները, հարմարանքները, պատրաստուկները և կոսմետիկ նյութերը, պահպանել անվտանգության տեխնիկայի կանոնները, պահպանել անձնական հիգիենայի նորմերը:
Կատարման չափանիշներ	-աշխատատեղը նախապատրաստված է, -կոսմետոլոգիական սրահի սանիտարահիգիենիկ պահանջները ապահովված են, -անհրաժեշտ սարքավորումները, գործիքները, հարմարանքները, պատրաստուկները և կոսմետիկ նյութերը նախապատրաստված են, -անվտանգության տեխնիկայի կանոնները պահպանված են, -անձնական հիգիենայի նորմերը պահպանված են:
<u>Խնդիրների բնագավառ 2. Դեմքի խնամքի և մերսման իրականացում</u>	
Աշխատանքային գործընթացը	Բացահայտել մաշկի խնդիրները, հաճախորդին տրամադրել խորհրդատվություն կատարվելիք կոսմետիկ միջոցառումների վերաբերյալ, ներկայացնել ցուցումներն ու հակացուցումները, ըստ

	մաշկի տեսակի, հաճախորդի տարիքի և անհրաժեշտության իրականացնել համապատասխան մշակում, խնամք և մերսում, պատրաստել և կիրառել անհրաժեշտ դիմակներ, իրականացնել մաշկի սեզոնային խնամք, տրամադրել հաճախորդին խորհրդատվություն տնային պայմաններում մաշկը խնամելու համար: Պահպանել անվտանգության տեխնիկայի կանոնները և սանիտարահիգիենիկ նորմերը:
Կատարման չափանիշներ	-մաշկի խնդիրները բացահայտված են, -համապատասխան խորհրդատվությունը հաճախորդին տրամադրված է, -ցուցումներն ու հակացուցումները ներկայացված են, -մաշկի մշակումը, խնամքը, մերսումը կատարված են, -անհրաժեշտ դիմակները պատրաստված են և կիրառված, -հաճախորդին տնային պայմաններում մաշկը խնամելու համար համապատասխան խորհրդատվությունը տրամադրված է: - անվտանգության տեխնիկայի և սանիտարահիգիենիկ նորմերը պահպանված են:
<u>Խնդիրների բնագավառ 3. Հոնքերի շտկում և թարթիչների սերտաճեցում</u>	
Աշխատանքային գործընթացը	Հաճախորդին տրամադրել խորհրդատվություն կատարվելիք կոսմետիկ միջոցառումների և հետագա անհրաժեշտ խնամքի վերաբերյալ՝ հաշվի առնելով վերջինիս նախասիրությունները, դեմքի կառուցվածքը՝ կատարել հոնքերի ձևի շտկում, ներկում և լամինացիա, թարթիչների սերտաճեցում և լամինացիա համապատասխան նյութերով: Պահպանել անվտանգության տեխնիկայի կանոնները և սանիտարահիգիենիկ նորմերը:
Կատարման չափանիշներ	-համապատասխան խորհրդատվությունը տրամադրված է, -հոնքերի ձևի շտկումը, ներկումը և լամինացիան կատարված է, -թարթիչների սերտաճեցումը և լամինացիան կատարված է, -անվտանգության տեխնիկայի և սանիտարահիգիենիկ նորմերը պահպանված են:
<u>Խնդիրների բնագավառ 4. Դեմքի դեկորատիվ հարդարում</u>	
Աշխատանքային	Հաշվի առնելով հաճախորդի նախասիրությունները, տարիքը,

գործընթացը	մաշկի տեսակը և դեմքի ձևը կատարել համապատասխան դիմահարդարում (առօրյա, երեկոյան, հարսանեկան): Շտկել մաշկի առկա թերություններն ու անհարթությունները: Պահպանել դիմահարդարման քայլերի հաջորդականությունը, անվտանգության տեխնիկայի կանոնները և սանիտարահիգիենիկ նորմերը:
Կատարման չափանիշներ	-հաճախորդի նախասիրությունները բացահայտված են, -դիմահարդարման ոճը ընտրված է և կատարված, -մաշկի առկա թերություններն ու անհարթությունները շտկված են, -հոնքերը շտկված են և ներկված են, -դիմահարդարման քայլերի հաջորդականությունը պահպանված է, - անվտանգության տեխնիկայի և սանիտարահիգիենիկ նորմերը պահպանված են:
<u>Խնդիրների բնագավառ 5. Ձեռքերի և ոտքերի եղունգների խնամք և հարդարում</u>	
Աշխատանքային գործընթացը	Ներկայացնել ձեռքերի և ոտքերի եղունգների հարդարման ցուցումներն ու հակացուցումները, հաշվի առնելով հաճախորդի նախասիրությունները իրականացնել ձեռքերի և ոտնաթաթերի մաքրում և մերսում, կատարել ձեռքերի և ոտքերի եղունգների մաքրում համապատասխան մեթոդով, իրականացնել եղունգների ախտահանում, անհրաժեշտության դեպքում մշակել ներաճած եղունգները, իրականացնել եղունգների գեղազարդում, կատարել եղունգի լիցք տարբեր մեթոդներով, կոսմետիկ եղունգի տեղադրում և հետագա խնամք (կորեկցիա, հեռացում), պահպանել անվտանգության տեխնիկայի կանոնները և սանիտարահիգիենիկ նորմերը:
Կատարման չափանիշներ	-ձեռքերի և ոտքերի եղունգների հարդարման ցուցումներն ու հակացուցումները ներկայացված են, -ձեռքերի և ոտնաթաթերի մաքրումն և մերսումը իրականացված են, -ձեռքերի և ոտքերի եղունգների մաքրումը համապատասխան մեթոդով կատարված է, -եղունգների ախտահանումն իրականացված է, -ներաճած եղունգները մշակված են,

	-եղունգների գեղազարդումն իրականացված է, -եղունգի լիցքը համապատասխան մեթոդներով կատարված է, -կոսմետիկ եղունգի տեղադրումն և հետագա խնամք (կորեկցիա, հեռացում) իրականացված է, -անվտանգության տեխնիկայի կանոնները և սանիտարահիգիենիկ նորմերը պահպանված են:
<u>Խնդիրների բնագավառ 6. Մազահեռացման կատարում</u>	
Աշխատանքային գործընթացը	Բացահայտել մաշկի և մազակալման խնդիրները, հաճախորդին տրամադրել խորհրդատվություն կատարվելիք կոսմետիկ միջոցառումների վերաբերյալ, ներկայացնել համապատասխան ցուցումները և հակացուցումները: Նախապատրաստել մաշկը մազահեռացման, կատարել համապատասխան մազահեռացումը: Իրականացնել մաշկի խնամք կատարված ընթացակարգից հետո: Պահպանել անվտանգության տեխնիկայի կանոնները և սանիտարա-հիգիենիկ նորմերը:
Կատարման չափանիշներ	-մաշկի և մազակալման խնդիրները բացահայտված են, -հաճախորդին խորհրդատվությունը կատարվելիք կոսմետիկ միջոցառումների վերաբերյալ տրամադրված է, -համապատասխան ցուցումները և հակացուցումները ներկայացված են, -մաշկը մազահեռացման նախապատրաստված է, -համապատասխան մազահեռացումը կատարված է, -կատարված ընթացակարգից հետո մաշկի խնամք իրականացված է, - անվտանգության տեխնիկայի կանոնները և սանիտարահիգիենիկ նորմերը պահպանված են:
III.Պատասխանատվությունը /անմիջական պատասխանատվության շրջանակ/	Դիմահարդար-կոսմետոլոգը պատասխանատու է իր կողմից կատարված ծառայությունների որակի, օգտագործվող նյութերի և սարքավորումների ընտրության հարցում հաճախորդին խորհրդատվություն տրամադրելու, նյութական միջոցները արդյունավետ օգտագործելու, աշխատանքը հաճախորդի պահանջներին և ակնկալվող արդյունքին համապատասխան կատարելու համար:

	Դիմահարդար-կոսմետոլոգը իր աշխատանքային պարտականությունների շրջանակներում սխալ գործողության հետևանքով հաճախորդի առողջության խաթարման կամ մահվան դեպքում պատասխանատվություն է կրում օրենքով հաստատված կարգով:
IV. Լեզուները	-Հայերեն-գերազանց -Ռուսերեն-բավարար -Անգլերեն-բավարար
V. Համակարգիչը	MS office –բավարար Internet Explorer բավարար
VI. Գիտելիքները	- Անվտանգություն և առաջին օգնություն, - հաղորդակցություն, - մասնագիտական էթիկայի հիմունքներ, - սանիտարիա և հիգիենա, - նկար և գեղանկարչություն, - մարդու անատոմիա և ֆիզիոլոգիա, - մաշկի տեսակները, - տեխնոլոգիական սարքավորումներ և նյութագիտություն, - կոսմետոլոգիական ծառայությունների հիգիենա և սանիտարիա:
VII. Կարողությունները և հմտությունները	- Կոսմետիկ, դիմահարդարման մատնահարդարման կաբինետներին ներկայացվող սանիտարական նորմերի պահպանման կարողություն, - սարքավորումներին, գործիքներին, օգտագործվող նյութերին ներկայացվող հիգիենիկ պահանջների պահպանման կարողություն, - տեխնոլոգիական գործընթացի իրականացման փուլերում հիգիենիկ պահանջների պահպանման կարողություն, - դիմահարդար-կոսմետոլոգիական ծառայությունների նախապատրաստական և ավարտական աշխատանքների իրականացման հմտություն, - բոլոր տեսակի մաշկի (դեմքի, ձեռքերի, ոտնաթաթերի), եղունգների խնամքի մեթոդների կիառման կարողություն, - նկարչական հմտություններ, - դիմահարդարման տեխնոլոգիաների կիառման կարողություն, - մատնահարդարման (մանիկյուր, պեդիկյուր) տեխնոլոգիաների

	կիառման կարողություն, - հոնքերի շտկման հմտություններ, - թարթիչների սերտաճեցման և լամինացիայի հմտություններ, - մազահեռացման հմտություններ:
VIII. Անձի որակական հատկանիշներ	Մասնագիտական էթիկայի դրույթներին հավատարմություն, մասնագիտական գործառույթների պատշաճ կատարում, պարտաճանաչություն, ճկունություն, կազմակերպվածություն, ճշտապահություն, համագործակցելու պատրաստակամություն, կարգապահություն, մաքրասիրություն, հոգատարություն, հանդուրժողականություն, տեխնոլոգիական նորարարությունների նկատմամբ ընկալունակություն, գիտելիքի ձեռքբերման, հմտությունների և կարողությունների զարգացման շարունակական ձգտում: